

րերն, մեր կենսին և աղջիկներն կօրօգ են և պիտի լինին ասաց՝ և քիչ մը աւելի յառաջ գնալով՝ վերջիշեալ տողերէն հետեւեցունել ինչ նա մեր կրթական ամեն պաշտօնէից բողոքաւորներ, և ամեն հաստատութեանց պոռնկատուն անունն տըւաւ՝ *):

Սոյն եղանակաւ խօսքերն և միտքերն խեղաթիւրելով ասպարէզ գալն ինչ անուամբ կը յորջորջուի՝ հարկ չէ կրկնել աստ Ս.յս մասնաւոր պարագային մէջ՝ ուրախ եմք որ այդ խորհրտն և ներգաւթը խմբագիրն իւր արժանի հարուածն ընդունեց հրապարակաւ: Կը յուսամք որ այսուհետեւ սա մի խրատ կը լինի նորա շաղկին հետեւեալ փափաք ունեցողներուն, և մեր գրագէտներէն շատերն այլ ևս չեն վարանիր լրագրական միջոցով ազդին հետ յարաբերութեան մանկու, փասն զի այսուհետեւ ոչ մի անպարկէշտ և կոպիտ մարդ պիտի յանդգնի, կարծեմք, անարգելու իւրեանց անձնաւորութիւնն, միշտ անպատիւ մնալու ակնկալութեամբ:

Եթէ Պ. Գ. Նիկողոսեանի գրածներն տակաւին մի դառն սպաւորութիւն թողած են նոցա վերայ որք անձամբ չեն ընթերցած նորա հատուածներն, կը յուսամք որ այդ սպաւորութիւնն ևս կը ջնջուի եթէ գայնա ճշդելու նպատակաւ գրուած ներկայ տողերու մի տեղ շնորհէք ձեր ազգագրութ լրագրին էջերուն մէջ:

Ս.յս առթիւ ներկեցեք որ մի գիտողութիւն ևս անեմ:

Մշակի՝ եւանդուն աշխատակցին գործածած ոճն և լեզուն կարելի է հաւասարապէս հաճելի չը թուի և Պոլսեցւոցս դիւրազգաց ականջներուն: Սա մի սովորութիւն ևս անեմ:

*) Ճշդելու նոյն ընթացքը բանեց այդ ճիշդութեան թերթը Պ. Գ. Նիկողոսեանի այն յորդանոց նկատմամբ ալ, որք Մասիսի մէջ հրատարակեցան:

Թեան և խառնուածոյ խնդիր է: Բայց նա այս արդարանալի համոզումն ունի, թէ ազգային գործոց այժմեան ընթացքն մի զգալի ցնցման պէտք ունի, և թէ այդ սթափեցուցիչ դերն կատարելու համար արտաքուստ եկած մի ոյժն աւելի ընդունակ է: Մասիս՝ և Նիկողոսեան Մամուլ՝ լրջամիտ օրագիրներն անձնական փորձով գիտեն թէ մեղմօրէն և համեստութեամբ յայտնուած կարծիքներն մեր ազգին վերա մի աստիճան միայն ազդեցութիւն ունին: Հարկ է խօսիլ նորա հետ՝ ինչպէս մի խակ և փոքր ինչ ինքնահաւան մանուկի հետ, առանց շրջապատութեանց, առանց անուղի ակնածութեանց: Պ. Նիկողոսեան՝ թէ՛ Մասիսի՝ թէ՛ Մամուլի՝ և Նիկողոսեանի լեզուին մէջ՝ զորած յօգուածոց շարքն լսելի և ազդու ընկու ամեն յատկութիւններն ունի, և տարակոյս չը կայ որ զայնս գնահատելով լուրջ անձինք պիտի գրադին այդ յարուցուած խնդրոց հետ, երբ նոքա աւարտին: Միւսն է հիմա լոկ մի լրագիր գտնուեցաւ և Պոլսոյ մէջ, որ բուն խնդրոցն հոգին չուղելով իմանալ *), յարաձակեցաւ նորա վերայ այն ոճով որ գիտէք, հակառակ մեր համակրական հիւրին արած կանխապէս ազգարարութեանց:

Պ. Նիկողոսեան գոհ պէտք է լինի անշուշտ գիտելով թէ այս իւր արկածէն յետոյ ինչ աստիճան իւր անձնականութեան համար համակրանք խօսեցան ամեն ազգային և օտար լրագիրք առանց բացառութեան, և վատահամբաւեցին միմայն այն բոլորտ ոչխարն որ ամբողջ հօտն արատաւորել կուզէ:

*) Խնդիր է գիտնալ թէ թերթէմանի խմբագրի խմբագրութիւնը կարող է իմանալ և բարձրեւել չափերն քիչ շատ վարդապետ գրուած մը: Նորա հետ մեր անեցած բազմաթիւ վիճարարութիւններէն պատճառով որ չափերն լիզուր մասն ունեցած հմտութեանը վրայ վատահամբաւութեան կարելի չէ:

տութեանը չը վերցրի իբրեւ օրինակ մի այլ ևս օրակարան ազգ աւելի կրթված, աւելի զարգացած մտաւորապէս և ապահովված նկատահանապէս, աւելի կազմակերպված, որ ընթերցողը չասէ, թէ ես չափազանցութեան եմ անում (մտաբերեմք յո՞ւսաց փիտ կղզու պատահանքը և նրան հասցրած օգնութիւնը): Երբում եմ այնպիսի օրինակ, որուն հետ մեզ բաղդադել կարելի է, բայց այստեղ ևս կարող են ինձ ասել, թէ նրան կարող է միջոցներ ժողովել հարկաւոր մէջ դրած հրէային, որովհետեւ ամեն երկրի մէջ դրած հրէային ձեռքում է, նա դրամի աստուածն է: Ճշմարիտ է, այդ ես ևս կը խոստովանվեմ, բայց խօսքը դրամի վրա չէ, նրա ժողոված միջոցների վրա չէ, այլ այն զգացմունքին, այն սիրտը վրա, որը նա զգում է դէպի իւր ազգակիցը, դէպի իւր եղբայրը: Ինչու այդ սէրը, այդ զգացմունքը չունենայ հայը դէպի հայը, կամ թէ ինչու պահանջներ, որ այդ զգացմունքը ունենայ և: Պոլսի հայը, իսկ Ռուսաստանի հայը ազատ լինի նորանից: Երբուհէն մէկը, կամ ընդունենք թէ թիւրքաց չալաստանը շատ գեղեցիկ գրութեան մէջ է, նրա վիճակը բարեւոյցված է, բընակիչները մեծ բարօրութիւն կը վայելեն, ոչ մի բանի կարօտութիւն չունեն և նրանց օգնելու պարտք չը կայ ոչ մէկու վրա, կամ թէ նա վատ վիճակի մէջ է, օգնութեան կարօտ է և այն ժամանակ օգնենք ամենքս միասին առանց խտրութեան՝ թէ սա պոլսեցի է, միւսը պարսկաստանցի և երրորդը ռուսաստանցի:

Իսկ թէ ինչ կերպով պէտք է օգնել, այդ ճանապարհները, իմ կարծիքով, շատ գեղեցիկ կերպով ցույց է տուել ազգագրութ պատմական «Մշակ»:

Այս ցույց տուած ճանապարհներն են հայրենիքի անտեսական դրութեան բարեփոխել, երկրի արդիւնաբերութեան բարձրացնելը, արհեստանոցների հիմնելը, ընկերութեանց հաստատելը և չալաստանի հետ նրանց անմիջական յարաբերութիւններն ունենալը, որոնք կարող են կատարվել փոքր ևս փոքր, քայլ առ քայլ, և ոչ թէ

յանկարծակի: («Մշակ» № 86): Այս բոլորը այնպիսի ճանապարհներ են, որոնց մերթիւրք լողկալի դէմ կը լինել և որպէս զի այդ ճշմարտութիւնները չը մնային իբրեւ լոկ խօսքեր, այլ իրագործվէին: «Մշակ» ցույց է տալիս նոյնպէս և այն եղանակները, որոնց միջոցաւ դրամը պէտք է իրագործվի: Դրա համար նա և Պոլսի հայ հասարակութիւնը բաժանում է չորս որոշ դասակարգերի և ամեն մէկի վրա դնում է նրա պարտքը («Մշակ» № 85): Խնդրելով մեծապատիւ յօդուածարի ներողամտութիւնը, ես թող կը տամ ինձ փոքր ինչ ընդարձակել այս վերջին հարցը և ասել թէ՛ այդ պարտաւորութիւնները կը վերաբերին ոչ թէ միայն և: Պոլսի հայերին, այլ բոլոր հայերին, ուրեմն և մեզ, ռուսաստանի հայերին, որովհետեւ ինչպէս վերեւ ասացի՝ հայը մէկ է, և ամա այս տեսակետից նայելով, ամենքս՝ ունենք արդեօք մենք, ռուսաստանի հայերս այն գլխաւոր չորս դասակարգերը, որոնց մասին կը խօսի «Մշակ»-ը: Կը պատահանեմ հաստատապէս, այն, ունենք լիովին այդ չորս դասակարգերը, որոնք եթէ ոչ աւելի, դնեն պակաս ոյժով չեն, քան թէ նոյնք և: Պոլսի մէջ, Բայց որպէս զի յօդուածս չերկարի և սիրելի ընթերցողի ուշադրութիւնը չը յոգանեցնեմ, ես կը վերցնեմ միայն երկու դասակարգ մեզինց և կը համեմատեմ նոյն տեսակների հետ և: Պոլսում: Առաջինը, այն աղքատ, բայց լուսաւորված դասակարգն է, որ ապրում է իր աշխատանքով և բաղկացած է ուսուցիչներից, քահանաներից, խմբագիրներից, բժիշկներից, տեխնիկներից և այլն: Այս անհատները մեղաւորում չառն չառն քան թէ և: Պոլսում և որպէս մտաւորական ոյժը եթէ ոչ առաւել բարձր, այնուամենայնիւ նուազ չէ իրանց ճանապարհի մայրաքաղաքում բնակվող ազգակիցների մտաւորական ոյժէն: Իսկ ինչ որ կը վերաբերի ազգին օգտուէտ անդամներ լինելու համարին ու զրգմանը, այդ ևս պակաս ու նուազ չը պէտք է լինի:

Այժմ նայենք թէ որանցից որը աւելի դիւրին կերպով (ի հարկէ համեմատաբար) կարող է ի-

Պ. Նիկողոսեան կատարելապէս բաւարարութիւն տուցած է ուրեմն հասարակութեան առաջ իւրեան դէմ եղած անպատիւ անարգանաց փոխարէն, փասն զի այն լրագրի վարձակալն, հակառակ իւր անպարծ խրոխտաբանութեանց, մերժեց վատաբար նորա վեհանք հրաւերն, որ Նիկողոսեանը՝ հասկացողութեամբ, պատուով վերաւերելուն հանդիսաբար բաւարարութիւն տալ է:

Կը յուսամք որ այս հրապարակական դասն տալէ վերջն, մեր ազնիւ արհեստիցն պիտի շարունակէ լրագրաց մէջ իւր տեսութիւններն, պատրաստ մնալով վիճարարնի այն ամեն պատուաւոր և հմուտ անձանց հետ, որք լուրջ և փայլուն կերպով գիտեն ազգային կենսական խնդիրներն լուծելու գրադիր:

(Մասիս)

ԲՈՒՂԱՐԻԱ

Սօֆիայից հաղորդում են, որ բոլգարական կառավարութիւնը վճռել է պաշտպանել այն պայմանները, որոնց դրել է իշխան Ալեքսանդր պատերազմական միւստարին գրած նամակի մէջ և հազիւ թէ յուսալի է, որ իշխանը կամաւորապէս որ և է զիջումն անէ: Այժմեան առաջին միւստարը կընդգրկմարի ամեն տեսակ համաձայնութեան, որ մի կերպ կարողանայ փոփոխել մի անգամ ընդգույժած նախագիծը: Սկզբից իշխանը մտադիր էր աւելի ծանր պայմաններ դնել, բայց այդ մտադրութիւնը չըրաւ գործվեցաւ: Կառավարութիւնը հաւատարմացած է, որ ժողովրդական վճիռը նրա համար ձեռնառու կը լինի և հետզհետէ աւելի խիստ միջոցներ է գործադրում արմատական կուսակցութեան դէմ, այսինքն այն մարդկերանց դէմ, որոնք ընդգրկմարում են կառավարութեանը: Պէտք է նկատել, որ

ժողովրդական շարժումը հետզհետէ մեծ չափեր է ստանում:

„Polit. Corresp.“ լրագրի տեղեկութեան համեմատ իշխան Ալեքսանդր շուտով կը վերջացնէ իր ճանապարհորդութիւնը: Բոլգարիայի մէջ և այնուհետեւ կը բնակվի Վարնա քաղաքում մինչև Սիւսօփի մէջ բացվի ազգային ժողովը: Ասում են որ պատերազմական միւստար գնեւորել էրն րօտի տեղ նշանակված է մի այլ ուսուցիչներալ: Գնեւորել էրն րօտ վճռել է թողնել միւստարի պաշտօնը մինչև ազգային ժողովի գումարվելը և բոլորովին հեռանալ Բոլգարիայից, եթէ ազգային ժողովը մերժէ իշխան Ալեքսանդրի պահանջները: Բ. Գուռը հրամայել է իր հաւատարմատարներն, չընդգրկմանալ բոլգարական իշխանի մտադրութեանը, այլ ընդհակառակը ազդել մահմետականների վրա, որպէս զի իշխանը կարողանայ իրագործել իր մտադրութիւնը: Զանազան պաշտօնական անձինք, կանխված լինելով ընդգրկմարական կուսակցութեան հետ յարաբերութիւններն ունենալու մէջ, զրկվում են իրանց պաշտօններից:

ՆԱՄՍԿ ՊԱՐՍՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Բուշեր, 25 մարտի

Իմ ճանապարհորդութիւնը Պարսկաստանում աւելի տուեց ինձ աւելի մօտից ծանօթանալ, թէ որպիսի յաջողութեամբ տարածվում է բողոքականութիւնը ոչ միայն հայերի մէջ, այլ տեղային մահմետականների մէջ ևս:

Այսանման մէջ գործում է միտար բրուս միսիստարը, որը մի չափազանց եռանդոտ և աշխատասէր քարոզիչ է: Երկար հալածանքներից յետոյ հայ կաթօլիկ և հայ լուսաւորչական կղերի կողմից, նրան յաջողվեցաւ վերջապէս բաց անել այդ քաղաքում երկու դպրոցներ, մինը աղաների, միւսը օրիորդների համար: Տղաների դպրոցը ունի 150 աշակերտ, բաղկացած է վեց դասարանից, ուսուցանում են եօթն վարժապետներ: Ուսանելի աւարականներն են՝ հայերէն, ան-

ու վրան է, թիւրք կառավարութեան պաշտօնատարների կամայականութեանն ու անարդարութեանն: ան ան հօր արդեւքը, այն չինական պատը, որ կանգնած է այդպիսի անձնանուէր, թէ ևս սակաւաթիւ, անհատների առաջը: Այսպիսի պարագաներ կարող են բոլորովին ուղեւորներ, անհատներ շուտ արտերի մէջ եղած կայքը, և ճշմարիտ եթէ դրանք նրան պատահեն, որուն դիմէ նա, որի պաշտպանութիւնը ինքնին դա: Կառավարութեան և օրէնքի, բայց թիւրք կառավարութեան ու օրինաց առաջ ինչ նշանակութիւն ունի ոչ միւսմեղական անձը, նա մասնաւոր հայը: Հիմա նայենք հարցը: Ենթադրենք թէ չալաստան գնացողը ռուսաբան մի բժիշկ է կամ ուսուցիչ, նա ևս եւթարկված է զանազան անաշտողութիւնների, ինչպէս՝ նրկական տպուկութիւնը լիովին ազատ հովված չը լինելուն կամ քիւրդ ու թիւրք աւաղակների կողպտութեանն ազատ չը մնալուն, բայց արդեօք նա տաճկաց կառավարութեան պաշտօնատարների կամ նոյն իսկ օրէնքի առաջ նայնպէս անպաշտպան է, ինչպէս նրա տաճկահայտակ եղբայրը: Այն նա հօր պաշտպան ունի այն տէրութիւնը, որին նա հպատակ է: Եթէ ռուսաց տէրութիւնը ոչ մի խտրութիւն չէ անում իր հպատակ հայի և բնիկ ռուսի մէջ, եթէ նրա օրէնսդրութիւնը մի է ամեն հպատակ ազգերի համար, միթէ նա, այդ տէրութիւնը խտրութիւն կանէ իր չըպատակները պաշտպանելու օտար տէրութեան առջև: հապա ինչու համար են նրա հիպատոսներ և դեպպանները այն տեղերը, ոչ ապաքէն իր սեփական հպատակներին պաշտպանելու համար: Ինչ է դուրս գալիս օրէնքի այս ասածները: այն, որ ռուսաբանակ և տաճկաբանակ հայ երկուստարներ գնալով ի չալաստան իրանց թշուառ եղբայր մտաւորական դուրսիւնը բարեւոյցելու դիտաւորութեամբ, թէպէտ և կը պատահեն զանազան խօչնդոտների և դժուարութեանց, այնու ամենայնիւ ռուսաստանցին աւելի պաշտպանված է, աւելի ազատ է իր գործունէութեան

